**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1**

**2025թ. փետրվարի 12-ին կնքված N «ՄՍԾ ՄԱԾՁԲ-25/7» պետության կարիքների համար ծառայությունների մատուցման գնման պայմանագրում փոփոխություն կատարելու մասին**

ք. Երևան «30» « 06 » 2025թ.

Միասնական սոցիալական ծառայությունը, ի դեմս Ծառայության գլխավոր քարտուղար Ա. Աղաբաբյանի, որը գործում է Ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից և «Մեգնա » ՍՊ Ընկերությունը, ի դեմս տնօրեն Ռուբեն Դարբինյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով Կողմերի միջև 12.02.2025թ. կնքված N «ՄՍԾ ՄԱԾՁԲ-25/7» պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 կետը, Ծառայության տնտեսական բաժնի կողմից Պայմանագրի տեխնիկական բնութագրի ավտոմեքենաների վերանորոգման և տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման ցանկում (Հավելված 1.1) փոփոխություն կատարելու վերաբերյալ 12.06.2025թ. թիվ Ներքին/ԱԱ/48028-2025 զեկուցագիրը, կնքեցին սույն Համաձայնագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կողմերը որոշեցին՝ Պայմանագրի 4.3 կետում «1587100 (մեկ միլիոն հինգ հարյուր ութսունյոթ հազար հարյուր)» բառերը փոխարինել «1812100 (մեկ միլիոն ութ հարյուր տասներկու հազար հարյուր)» բառերով:

1.2 Պայմանագրով հաստատված N 1.1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն Համաձայնագրի N 1 Հավելվածի:

1.3 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, ծառայությունների մատուցման Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.2 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Սույն Համաձայնագիրը կազմված է մեկ (1) էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու բնօրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| Միասնական սոցիալական ծառայություն | «Մեգնա» ՍՊԸ |
| Ք. Երևան, Նալբանդյան 13 | ք. Երևան, Աճառյան 42 |
| ՀՎՀՀ 02505511 | ՀՎՀՀ 00083019 |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | Բանկ՝ Արդշինինվեստ ՓԲԸ |
| Հ/Հ 900011556355 | Հ/Հ 217002080588001 |
| ------------------------- (ստորագրություն) | ------------------------- (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված*
*«12» «փետրվարի » 2025թ. կնքվա*
*«ՄՍԾ ՄԱԾՁԲ-25/7» ծածկագրով գնման պայմանագրի հիման վր*
*«30» « 06 » 2025թ. կնքված Համաձայնագր*

# Տեխնիկական բնութագիր

## Ավտոմեքենաների վերանորոգման և տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման

/վերանորոգման ընթացքում օգտագործվող պահեստամասերի, նյութերի և այլ օժանդակ նյութերի անվանումները և պայմանագրով հաստատված առավելագույն գները/

| Հ/Հ | Պահեստամասեր և աշխատանք | Չափաբ. 1 Renault Megane | Չափաբ. 2 Renault Kaleos |
|---|---|---|---|
| | | CPV 50111130/6 | CPV 50111130/7 |
| 1 | Շարժիչի յուղ | 7800 | 7800 |
| 2 | Շարժիչի յուղի զտիչ | 7200 | 7200 |
| 3 | Շարժիչի յուղի և յուղի զտիչի փոխարինում | 7500 | 7500 |
| 4 | Շարժիչի օդի զտիչ | 9600 | 18000 |
| 5 | Շարժիչի օդի զտիչի փոխարինում | 3000 | 3000 |
| 6 | Սրահի օդի զտիչ | 12000 | 12000 |
| 7 | Սրահի օդի զտիչի փոխարինում | 3000 | 3000 |
| 8 | Առջևի արգելակման կոճղակներ | 66000 | 60000 |
| 9 | Առջևի արգելակման կոճղակների փոխարինում | 7500 | 7500 |
| 10 | Հետևի արգելակման կոճղակներ | 30000 | 60000 |
| 11 | Հետևի արգելակման կոճղակների փոխարինում | 10500 | 10500 |
| 12 | Վառոցքի մոմեր /4 հատ/ | 24000 | 91200 |
| 13 | Վառոցքի մոմերի փոխարինում | 15000 | 15000 |
| 14 | Անվաբացքի ուղղում | 12000 | 12000 |
| 15 | Անվադողերի փոխարինում /4 հատ/ | 4000 | 4000 |
| 16 | Անվադողերի բալանս /4 հատ/ | 6000 | 6000 |
| 17 | Լծակ աջ | 65000 | 62400 |
| 18 | Լծակ ձախ | 65000 | 62400 |
| 19 | Լծակի փոխարինում | 15000 | 15000 |
| 20 | Առջևի հարվածամեղմիչ | 42000 | 48000 |
| 21 | Հարվածամեղմիչի փոխարինում | 12000 | 12000 |
| 22 | Հետևի հարվածամեղմիչ | 36000 | |
| 23 | Կայունարարի կանգնակ | 33600 | 24000 |
| 24 | Կայունարարի կանգնակի փոխարինում | 7500 | 7500 |
| 25 | Առջևի արգելակման սկավառակների հավաքածու | 61200 | 84000 |
| 26 | Առջևի սկավառակների փոխարինում | 15000 | 15000 |
| 27 | Հետևի արգելակման սկավառակների հավաքածու | 120000 | 108000 |
| 28 | Գեներատորի փոկ | 36000 | 19200 |

| | | | |
|---|---|---|---|
| 29 | Փոկի փոխարինում | 12000 | 12000 |
| 31 | Անվակունդի փոխարինում | 15000 | 15000 |
| 32 | Ապակեմաքրիչների կոմպլեկտ | | 34000 |
| 33 | Փոխանցման տուփի հենակ | 30000 | 310000 |
| 34 | Փոխանցման տուփի հենակի փոխարինում | 15000 | 15000 |
| 35 | Շարժիչի աջ հենակ | | 74000 |
| 36 | Շարժիչի աջ հենակի փոխարինում | | 13500 |
| 39 | Ջրի պոմպ | 40000 | 67200 |
| 40 | Ջրի պոմպի փոխարինում | 48000 | 48000 |
| 41 | Թերմոստատ | 12000 | 32000 |
| 42 | Շարժիչի հովացնող հեղուկ (1լ) | 4199 | 4200 |
| 43 | Շարժիչի հովացնող հեղուկի փոխարինում | 24000 | 24000 |
| 46 | Արգելակման հեղուկ | 4000 | 4000 |
| 47 | Լյամբդա տվիչ | 90000 | 116000 |
| 48 | Լյամբդա տվիչի փոխարինում | 15000 | 15000 |
| 50 | Ապակի մաքրելու հեղուկ /5լ/ | 21000 | 21000 |
| 51 | Թափարգելի (բամպեր) 1 հատվածի վերանորոգում | | 60000 |
| 52 | Թափքի 1 հատվածի վերանորոգում | | 50000 |
| 53 | Թափքի 1 հատվածի ներկում | | 60000 |
| 54 | Հետևի լուսարձակ | | 45000 |
| 55 | Լուսարձակի փոխարինում | | 10000 |
| | **ԸՆԴՀԱՆՈՒՐ** | **1063599** | **1812100** |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

*Միասնական սոցիալական ծառայություն*

*Ք. Երևան, Նալբանդյան 13*

*ՀՎՀՀ 02505511*

*ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն*

*Հ/Հ 900011556355*

---------------------------------------

*(ստորագրություն)*

*Կ. Տ*

**ԿԱՏԱՐՈՂ**

*«Մեգնա» ՍՊԸ*

*ք. Երևան, Աճառյան 42*

*ՀՎՀՀ՝ 00083019*

*Բանկ՝ Արդշինինվեստբանկ ՓԲԸ*

*Հ/Հ 2170020805880001*

---------------------------------------

*(ստորագրություն)*

*Կ.Տ*